

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԲԱՆԱԳԵՏ – ԺՈՂՈՎՐԴԱԳԵՏԸ
(Վերժինե Սվազյանի ծննդյան 80-ամյա հոբելյանի առթիվ)

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վերժինե Սվազյանը Հայաստանում և արտերկրում լայն ճանաչում ունեցող, երախտաշատ բանահավաք, բանագետ, անվանի ցեղասպանագետ է: Տեղին է հիշատակել Վ. Սվազյանի դոկտորական ատենախոսության ընդդիմախոս, բանասիրական գիտությունների դոկտոր Պիոն Հակոբյանի հնչեցրած հետևյալ գնահատականը.



«Կարելի է պատկերացնել, թե բանասիրական և պատմագիտական ինչ վիթխարի ժառանգությունից կզրկվեր հայրենի գիտությունը, եթե ճակատագիրն ինքն ասպարեզ չհաներ Վերժինե Սվազյանի նման ըստ ամենայնի պատրաստված քննախնդիր ու նվիրված բանագետ, բանահավաքին»:

Վերժինե Սվազյանի նման ըստ ամենայնի պատրաստված քննախնդիր ու նվիրված բանագետ, բանահավաքին»:

Վ. Սվազյանը ծնվել է 1934 թ. մարտի 1-ին Եգիպտոսում: 1947 թ. Սվազյանների ընտանիքը հայրենադարձվում է Մայր Հայաստան: Մեծ էր հոր՝ գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Գառնիկ Սվազյանի դերը դստեր հայրենասեր ու նվիրյալ անհատի ձևավորման գործում: 1956 թ. Վ. Սվազյանը գերազանցությամբ ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական բաժինը:

Մանկավարժական գործունեությանը զուգընթաց «Սովետական Հայաստան» ամսագրի և այլ պարբերականների էջերում, հետագայում նաև ռադիոյով և հեռուստատեսությամբ ներկայացրել է հայրենիքում հանգրվանած, տարագիր հայրենադարձների կյանքն ու կենցաղը, նրանց կրթական ու մասնագիտական աննախադեպ վերելքը հայրենի հողի վրա:

Վ. Սվազյանը 1955 թ. սկսած՝ շուրջ 60 տարիների ընթացքում, անձնական նախաձեռնությամբ և անմնացորդ նվիրումով թաղից թաղ, գյուղից գյուղ շրջելով, գրանցել ու վերականգնել է մեր զավթված Երկրի՝ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայության բանավոր մշակույթը՝ զանազան բարբառներով հորինված բանահյու-

սական տարաբնույթ նշխարները, ինչպես նաև Հայոց ցեղասպանությունից մազապուրծ ականատես վերապրողներից գրառել, ձայնագրել, տեսագրել և ուսումնասիրել է նրանց հաղորդած փաստավավերական վկայությունները:

1958 թ. Վ. Սվազյանն աշխատել է Հայաստանի ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում, նախ՝ որպես լաբորանտ, ապա՝ նույն ինստիտուտում ասպիրանտական ուսումնառության տարիներին բարձր առաջադիմության համար նրան շնորհվել է Մ. Արեղյանի անվան թոշակ: Անվանի ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը, ծանոթանալով երիտասարդ բանահավաքի բարբառագիտական ճշգրտությամբ գրառած բանահյուսական նորահայտ նյութերին և գնահատելով դրանց բարձր մակարդակն ու աղբյուրագիտական կարևորությունը, ստանձնել է նրա գիտական ղեկավարությունը՝ առաջարկելով ուսումնասիրել XIX դարի երախտաշատ բանահավաք, ազգագրագետ «Սարգիս Հայկունու կյանքն ու գործը»: Վ. Սվազյանը, ուսումնասիրելով Մ. Հայկունու աննշակ արխիվային նյութերը, 1965 թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: Մենագրությունը լույս է տեսել 1973 թ.:

Վ. Սվազյանը 1961 թ. մինչև օրս աշխատում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայ ժողովրդական բանահյուսության տեսության և պատմության բաժնում, սկզբում՝ կրտսեր, 1972 թվականից՝ ավագ, 1995 թվականից առ այսօր՝ առաջատար գիտաշխատողի պաշտոններով: 1996–2004 թթ. նա աշխատել է նաև ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում՝ շարունակելով գրանցել, ուսումնասիրել, նաև՝ տեսագրել հարյուրավոր վերապրողների հաղորդած վկայությունները:

Երիտասարդ գիտնականը Հնագիտության և ազգագրության ինստիտուտում աշխատելու տարիներին կազմել և խմբագրել է 1915 թ. Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից՝ ոտքով Արևելյան Հայաստան հասած տարագիրների պատմած ժողովրդական հեքիաթները, որոնք համաճարակի դժվարին պայմաններում գրի էին առնվել ազգագրագետ Եր. Լալայանի և նրա արշավախմբի անդամների ջանքերով Մբ. Էջմիածնի վանքի պատերի տակ ծվարած արևմտահայ գաղթականներից: Դժվարությամբ վերծանելով արդեն իսկ անընթեռնելի դարձած հիշյալ բնագրերը, նաև ճշտելով բարբառների հնչունային նրբերանգները՝ Վ. Սվազյանը մանրամասն ծանոթագրել է հարյուրավոր հեքիաթներ և ստեղծել տվյալ տեղավայրերի բարբառային բառերի բացատրական բառարաններ: Կորստից փրկված այդ հեքիաթները լույս են տեսել «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական մատենաշարի «Արցախ-Ուտիք» (հ. VI, 1973), «Տարոն-Տուրուբերան» (հ. XII, 1984) և ավելի ուշ՝ «Վան-Վասպուրական» (հ. XV, 1998) հատորներում:

Այդ առիթով Հայաստանի «Վասպուրական» հայրենակցական միությունը նրան շնորհել է «Պատվավոր Վասպուրականցի» կոչում (1990):

Վ. Սվազյանն անձնական նախաձեռնությամբ տարիներ շարունակ գրի է առել խրթին և անհասկանալի, արդեն իսկ անհետացող Մուսա լեռան (Սվեդիա) երեք ենթաբարբառներով բանահյուսական նորահայտ տարաբնույթ ժողովրդական նյութերը: Այդ փրկված նշխարները ներկայացրել է՝ զուգահեռաբար թարգմանելով գրական հայերենի: Հիշյալ ժողովածուի գիտական ուսումնասիրության մեջ Վ. Սվազյանը հայրենիք ներգաղթած պատմաագագրական այդ ինքնատիպ խմբի ավանդապահության մակարդակը պայմանավորել է ժամանակագրական և աշխարհագրական տեղաշարժերի, սոցիալ-պատմական պայմանների, բանասացների սեռատարիքային հատկանիշների ու հոգեբանական այլ հիմնախնդիրներով: Պատմաբանագիտական և էթնոսոցիոլոգիական խորագնին ուսումնասիրությունը կատարվել է ժողովրդական նյութերի քանակային վերլուծության նորագույն մեթոդով: Վ. Սվազյանի «Մուսա լեռ» (1984) աշխատությունն արժանացել է ՀՍՄՀ - ԳԱ նախագահության «Գովեստագրին», նաև՝ «Մուսա լեռ» հայրենակցական ընդհանուր միության (Բեյրութ) «Պատվավոր Մուսալեռցի» Ոսկե մեդալին (1985): Բացի այդ, նա նախապատրաստել ու խմբագրել է բնիկ մուսալեռցի մտավորական Գրիգոր Գյոզայանի «Մուսա լեռան ազգագրությունը» (2001) արժեքավոր աշխատությունը:

Վ. Սվազյանի «Կիլիկիա. արևմտահայոց բանավոր ավանդություններ» (1994) ստվարածավալ հատորն ընդգրկում է Կիլիկիայի և շրջակա արևմտահայ 50 տեղավայրերի (Զեյթուն, Հաճրն, Մարաշ, Այնթապ, Քեսապ, Բեյլան, Ադանա, Մերսին, Տարսոն, Սիս, Մուսա լեռ և այլն) բանավոր մշակույթն իր բազմաբովանդակ կողմերով: Մեծ է ինչպես այս, այնպես էլ նախորդ՝ «Մուսա լեռ» աշխատության ոչ միայն բանագիտական, այլև բարբառագիտական արժեքը:

Հայոց ցեղասպանության 80-ամյա հիշատակին է նվիրված Վ. Սվազյանի «Մեծ եղեռն. արևմտահայոց բանավոր վկայություններ» (1995) աշխատությունը, որտեղ ամփոփված են կիլիկիահայ ականատես վկաներից նրա գրի առած պատմափաստագրական բնույթի նյութերը:

Ի մի բերելով «Մուսա լեռ», «Կիլիկիա. արևմտահայոց բանավոր ավանդություններ» և «Մեծ եղեռն. արևմտահայոց բանավոր վկայություններ» նոր աշխատությունները՝ Վ. Սվազյանը շարադրել է «Կիլիկիայի հայոց բանավոր մշակույթը» ինքնատիպ մենագրությունը, որի համար 1995 թ. նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: Մույն աշխատությունը բարձր է գնահատել Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտին կից գործող մասնագիտական խորհրդի նախագահ, ակադեմիկոս Էդ. Զրբաշյանը՝ նշելով. «Սվազյանը

նի բազմամյա բանահավաքչական, բանագիտական աշխատանքն իր մեթոդական նոր մոտեցումներով և ծանրակշիռ արդյունքներով նոր խոսք է հայ բանագիտության ասպարեզում: Նա իր բանահյուսական հարուստ ու բազմաժանր նյութերի և Հայոց ցեղասպանության ականատես վկանների պատմած հուշերի իմաստավորմամբ ու մանրագնին քննարկումներով իր նախադեպը չունի ընթացիկ հարյուրամյակի՝ XX դարի արևմտահայ բանավոր ավանդության հավաքման և ուսումնասիրման պատմության մեջ: Հիշյալ աշխատությունների համար «Մուսա լեռ» հայրենակցական բարեգործական միությունը նրան արժանացրել է «Պատվոգրի» (1995), իսկ «Զեյթուն» պատմամշակութային միությունը՝ «Պատվավոր Զեյթունցի», նաև «Հաճրն» հայրենակցական միությունը՝ «Պատվավոր Հաճրնցի» կոչումներին:

Վ. Սվազյանի պատմագիտական գրառումներում և ցեղասպանագիտության ասպարեզում փաստագրական բացառիկ արժեք են ներկայացնում դերգորյան թուրքալեզու երգերը, որոնք նա դժվարությամբ հայտնաբերել, գրառել և ուսումնասիրել է իր «Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատմություն և թուրքալեզու երգերում» (1997, 1999, հայերեն, ռուսերեն, անգլերեն, իսկ թուրքերենը՝ 2005, Ստամբուլ): Այն տեղադրվել է նաև համացանցում՝ մեծ աղմուկ բարձրացնելով թուրք հասարակության շրջանում, քանի որ իրենք չունեն ժողովրդական փաստագրական նման վկայություններ:

1996 թ. վաստակաշատ բանագետը հրավիրվել է մասնակցելու Կ. Պոլսի Հայոց Պատրիարքական աթոռի հիմնադրման 535-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին: Այնտեղ նա նպատակադրվում և հետևողականորեն իրականացնում է հայ համայնքի մշակութային կյանքի ուսումնասիրությունը: Կարճ ժամանակամիջոցում նա ժողովրդագիտական նյութեր է գրառում Պոլսո հայ համայնքում, Սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի ծերանոցում, Իշխանաց կղզիներում և Սաման դաղում (Մուսա լեռ): Շատ չանցած՝ լույս է ընծայվում նրա «Պոլսահայոց բանահյուսությունը» (2000) արժեքավոր աշխատությունը, որն ընդգրկում է արդի պոլսահայերից, Թուրքիայի գավառներից Ստամբուլ փոխադրված հայերից, մասամբ նաև 1920-ական թվականներից Հայաստան ներգաղթած պոլսահայերից իր իսկ գրառած բանավոր ավանդության տարաբնույթ նշխարները: Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (INALCO) լեզվաբանական հայագիտական մասնաճյուղի տնօրեն, դոկտոր Անահիտ Տոնապետյանը, բարձր գնահատելով այդ աշխատությունը, նշել է, որ արմատներով արևմտահայ հեղինակն իր այս աշխատասիրությունը հատուկ նպատակով ներկայացրել է արևմտահայերենով և դասական ուղղագրությամբ, ինչն անչափ կարևոր է Սփյուռքի գաղթօջախների համար և՛ որպես դասագիրք, և՛ որպես ընթերցանության նյութ («Պատ-

մա-բանասիրական հանդես», 2001, -3, էջ 290-291): Սույն աշխատության համար Վ. Սվազյանը սփյուռքում արժանացել է մի շարք պարգևների. Փարիզի «Արարատ» հայագիտական ակադեմիան նրան շնորհել է պրոֆեսորի կոչում (2004), Մոնրեալում Պոլսահայ մշակութային միությունը՝ «Ոսկե մեդալ» (2005), Սիրիայում ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղը՝ «Մեարոպ Մաշտոց» հուշամեդալ (2005), իսկ Ալեքսանդրիայի Հայոց քաղաքական ժողովը՝ «Նեղոսի բանալի» Ոսկե հուշամեդալ (2006):

Հայոց ցեղասպանության 85-ամյա հիշատակին է նվիրված Վ. Սվազյանի «Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ» (2000) խորագրով ստվարածավալ հատորը, որն իր տեսակի մեջ պատմաքաղաքական արժեք ունեցող եզակի աշխատություն է: Ականատես վերապրողների հաղորդած վկայությունները ներկայացնում են արևմտահայությանը բաժին ընկած ողբերգական կյանքի դրվագները, ինչպես նաև նրանց մղած արդար ու ազնիվ պայքարն իրենց ապրելու տարրական իրավունքը պաշտպանելու համար: Այդ աննախադեպ աշխատության համար Վ. Սվազյանն արժանացել է ՀՀ - ԳԱԱ նախագահության «Պատվոգրին» (2000), սփյուռքի Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» գիտական-բանասիրական մրցանակին (2002), նաև՝ ՀՀ ԳԱԱ նախագահության և «Ճշմարիտները հայերի համար» միջազգային կոմիտեի «Ֆրիտյոֆ Նանսեն» հուշամեդալին (2003):

Վ. Սվազյանը Հայոց ցեղասպանության 90-ամյա հիշատակին է նվիրել «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» խորագրով ինքնատիպ ուսումնասիրությունը, որը լույս է տեսել վեց լեզուներով (2003-2005, հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, իսկ թուրքերենը՝ Ստամբուլ): Հեղինակը, ականատես վերապրողների հաղորդած հուշերն ու պատմական բնույթի ժողովրդական երգերը համադրելով պատմական իրադարձությունների հետ, ներկայացրել է Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքը՝ սկսած 1908 թ. երիտթուրքական սահմանադրությունից մինչև 1922 թ. Զմյուռնիայի աղետը: Ցեղասպանագիտության ասպարեզում ունեցած վաստակի համար Վ. Սվազյանին շնորհվել է ՀՀ կառավարության «Հուշամեդալ» (2005), «Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդնելու համար» ՀՀ Նախագահի առաջին մրցանակ և «Ոսկե հուշամեդալ» (2006), ինչպես նաև «Հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտ» հուշամեդալ (2009):

Վաստակաշատ բանագետի գրչին է պատկանում նաև “Armenia” - ծավալուն հոդվածը, որը լույս է տեսել ԱՄՆ-ում համաշխարհային ֆոլկլորին նվիրված մեծադիր քառաստոր հանրագիտարանում (“The Greenwood Encyclopedia of World Folklore and Folklife.” Ed. William M.

Clements, vol. 2. Westport, London: Greenwood Press, 2006, pp. 357–372): *Այնտեղ հայ ժողովրդի բանահյուսությունը ներկայացված է պատմական հենքի վրա՝ սկսած հազարամյակների խորքից, հասցնելով մինչև մեր օրերը: Մինչ այդ գրեթե անհայտ մնացած հայ ժողովրդական հարուստ բանահյուսությունն ու կենցաղը համաշխարհային հեղինակավոր հանրագիտարանի միջոցով առաջին անգամ աշխարհին ներկայացնելու համար Ամերիկյան կենսագրական ինստիտուտը Վ. Մվազլյանին շնորհել է «21-րդ դարի Մեծագույն Միտք» («The Great Mind of the 21st Century») տիտղոս և հուշամեդալ (2008):*

Նվիրյալ մտավորականը բնավ չի դադարել իրականացնել իր գիտակցական կյանքում նպատակադրած մեծ գործը. եթե մինչ այդ Հայոց ցեղասպանության ականատես վերապրողներին գրանցում էր Հայաստանի տարբեր շրջաններում, ապա արդեն, օգտվելով արտասահմանյան միջազգային գիտաժողովներին հրավիրվելու հանգամանքից, շարունակել է նաև արտերկրում (Հունաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Բուայիա, Գերմանիա, Ավստրիա, Կանադա, ԱՄՆ, Եգիպտոս, Լիբանան, Սիրիա-Դեր Զոր, Թուրքիա)՝ ամենուր որոնել-գտնելով արդեն իսկ անհետացող ականատես վկաներին, նրանցից գրանցելով իրենց տեսածն ու զգացածը, նրանց անջնջելի տպավորությունները: Վ. Մվազլյանի կողմից գրանցված ժողովրդական նյութերի թիվը հասել է 700 միավորի, որոնք ներկայացնում են մեր զավթված երկրի 150 տեղավայրերից բռնի տարագրված և աշխարհով մեկ սփռված ականատեսների վկայություններ: Վերջին տասը տարիների ընթացքում նորանոր վկայություններով համալրված «Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ» (2011, հայերեն և անգլերեն, իսկ թուրքերենը՝ 2013, Ստամբուլ) ծավալուն ուսումնասիրություն և բազմաբնույթ տեղեկատվական ցուցիչներ ու ծանոթագրություններ պարունակող, պատմաքաղաքական բացառիկ արժեք ներկայացնող սույն ստվարածավալ եռալեզու հատորները լույս են տեսել ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, նաև Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհուրդների որոշմամբ:

Հիշյալ աշխատության ուսումնասիրության մեջ առաջին անգամ բնորոշվում է «ժողովրդական վկայություն» եզրույթը որպես պատմաբանագիտական նորահայտ ժանր: Ապա՝ ժողովրդական վկայությունները բարձրացնելով պատմագիտական և իրավաբանական մակարդակի, հեղինակը ներկայացնում է Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքը և նշում. «Քանի որ հայ ժողովուրդն ի նքն է կրել այդ բոլոր անասելի տառապանքները, հետևաբար, ժողովուրդն ի նքն է այդ զանգվածային քաղաքական ոճրագործության առարկան (object): Եվ ինչպես ամեն մի հանցագործություն բացահայտելիս որոշիչ են վկաների

ցուցմունքները, նույնպես և այս պարագայում պետք է հենվել նաև ականատես վերապրողների վկայությունների վրա, որոնցից յուրաքանչյուրն իրավաբանական տեսակետից ապացուցողական նշանակություն ունի Հայ Դատի արդարացի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման գործում» (էջ 7):

Վ. Սվազյանի թուրքերեն սույն տարողունակ աշխատությունը հեղինակի երրորդ գիրքն է, որը լույս է տեսել Թուրքիայում Մարդու իրավունքների պաշտպան, թուրք առաջավոր մտավորական Ռազիպ Ջարաբոլուի «Բելգե» («Փաստարկ») հրատարակչությամբ: Թուրքիայի “Taraf” թերթին (11 հոկտեմբերի 2013) տված հարցազրույցում հրատարակիչը հայտարարել է. «Սույն աշխատությունն իր ծավալով և բովանդակությամբ աննախադեպ է 1976 թ. հիմնադրված «Բելգե» հրատարակչության գործունեության մեջ: Գիրքը ոչ միայն հայ ժողովրդի, այլ նաև մեր` թուրք ժողովրդի պատմությունն է: Ամենաշատ ասելիքն այս գրքի մեջ է: Սրանք պարզ ժողովրդական վկայություններ են, որոնք բացելու են թուրք հասարակության աչքերը»: Հեղինակին հաջողվել է գրքի այդ հրատարակությունը փոխանցել Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուին, որը 2013 թ. նոյեմբերին 4 ժամով եկել էր Երևան` մասնակցելու Սևծովյան համագործակցության երկրների համաժողովին: Ծանոթանալով գրքին` նա ասել է. «Ահավոր բաներ կատարվեցան այդ ժամանակ: ... Ես որպես գիտնական կհավատամ, որ միայն արդար հիշողության վրա կարելի է կառուցանել պատմությունը» («Մարմարա», 16 դեկտեմբերի 2013, էջ 1, 4):

Երեք լեզուներով հրատարակված ծանրակշիռ և նպատակամետ այս աշխատության համար Հայոց փիլիսոփայական ակադեմիան Վ. Սվազյանին պարգևատրել է «Եռամեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթ» Մեծ հուշամեդալով (2011), իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահը «ՀՀ ԳԱ Ակադեմիայի հիմնադրման 70-ամյակի կապակցությամբ գիտության և կրթության բնագավառում մատուցած ակնառու ծառայությունների համար» նրան շնորհել է «Մովսես Խորենացի» մեդալ (2013):

Վ. Սվազյանը մասնակցել է հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների, նաև զեկուցումներով հանդես եկել սփյուռքահայ համայնքներում` բանագիտությանը, ժողովրդագիտությանը, ցեղասպանագիտությանն ու Հայկական հարցին առնչվող թեմաներով:

Այժմ անվանի բանագետը հրատարակության է պատրաստում «Ամերիկահայոց բանավոր մշակույթը» աշխատությունը, որտեղ ամփոփված են ԱՄՆ կատարած իր անձնական և գիտաժողովային այցելությունների ընթացքում (1979, 1989, 2001, 2008) տեղի հայ համայնքից գրի առած ժողովրդական նորահայտ, ինքնատիպ ու տարաբնույթ նյութերը:

Վ. Սվազյանը 500-ից ավելի գիտական և հրապարակախոսական հրատարակությունների, ընդ որում՝ 25 գրքերի, հեղինակ է, որոնք լույս են տեսել Հայաստանում և արտերկրում:

Անխոնջ ժողովրդագետն իր նպատակաւազ կյանքի ընթացքում նվիրյալ ջանքերի շնորհիվ գրառել և անհետ կորստից փրկել է ժողովրդական բանավոր մշակույթի ու կենցաղի վերաբերյալ ավելի քան 10 հազար միավոր նյութ, որոնք, հանգամանորեն ուսումնասիրելով, նոր էջ է բացել հայագիտության բանագավառում: Հետևաբար, նա իր խորին երախտագիտությունն է հայտնում «...Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված այն սերունդներին, որոնք, հերոսաբար դիմագրավելով կյանքի դաժան պայմաններին, իրենց հիշողության խորխորատներում անթեղած պահել, պահպանել ու սերունդներին են փոխանցել իրենց տեսածն ու հիշածը՝ անհետ կորստից փրկելով հայ ժողովրդի պատմական հավաքական հիշողությունը, որպեսզի այն ներկայացվի աշխարհին և մարդկության արդար դատին» (էջ 6):

Շնորհավորելով վաստակաշատ ժողովրդագետ Վերժինե Սվազյանին իր արգասավոր հոբելյանի առթիվ՝ մաղթում ենք նրան արևշատություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ